ՀԱՅ ՀՈՒՄԱՆԻՍՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ

Մարդկության պատմության հնագույն ժամանակներից ի վեր հայ ժողովուրդն իր գեղարվեստական ստեղծագործության մեջ արտացոլել է ազատ ու երջանիկ կյանքի մասին իր պատկերացումները, գովերգել հասարակական ու բնական չար ուժերի դեմ մարդու պայքարը, դրվատել բարին ու մարդկայինը:

Արդեն իսկ գողթան երգիչների հուզիչ պատմություններում ու ժողովրդի վիպական ստեղծագործություններում («Հայկ և Բել» , «Արա Գեղեցիկ և Շամիրամ» , «Վահագն» , «Արտաշես և Արտավազդ» և այլն) հնադարյան պարզությամբ արտահայտվել են հայ ժողովրդի ոգուն խորապես բնորոշ ազատասիրական ու մարդասիրական ձգտումները, այն լավատեսական ոգին, որը ներքուստ հատուկ է եղել ժողովրդին և երբեք չի մարել նրա մեջ:

«Արտաշես և Արտավազդ» վիպական ստեղծագործության մեջ խելացի ու առաքինի Արտաշեսին հակադրվում է քմահաճ ու չար արքայորդին՝ Արտավազդը: Հայրն անիծում է որդուն, և այդ անեծքն իրականանում է: Մասիսի վրա որսի ելած ժամանակ քաջքերը բռնում են Արտավազդին և շղթայում նրան: Հավատարիմ գամփռներն անդադար կրծում են արքայորդու կապանքները, որպեսզի նա դուրս գա քարայրից՝ աշխարհի վրա մահ ու ավերածություն սփռելու: Սակայն դարբինների մուրճերի հուժկու հարվածների տակ նրա կապանքները մշտապես ամրանում են: Հանձին Արտավազդի՝ ժողովուրդը շղթայում ու տանջում է չարության ոգուն, նրան, ում ազատությունը աշխարհին կբերի վիշտ ու տառապանք, կոտորած ու ավեր: Միանգամայն բնորոշ է ստեղծագործության խորապես լավատեսական ոգին, որը գեղեցիկ ապագայի, վերածննդի անխուսափելի հաղթանակի նկատմամբ ժողովրդի անհողդողդ հավատի արտահայտությունն է:

Հայ ժողովրդի մարդասիրական ձգտումներն առավել բազմակողմանի ու խոր դրսևորվեցին հատկապես X–XI դդ. հայկական իրականության մեջ՝ ներթափանցելով դարաշրջանի առաջավոր գաղափարախոսության, գրականության ու արվեստի ոլորտները: Այդ դարերը դարձան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգևոր զարգացման կարևոր ժամանակաշրջան: Դրանք նշանավորվեցին, ամենից առաջ, տնտեսական կյանքի նոր իրողություններով, արհեստների ու առևտրի բուռն աճով, քաղաքների աննախընթաց զարգացմամբ, որոնք ավելի ու ավելի էին դառնում արհեստների ու ապրանքափոխային հարաբերությունների կենտրոններ: «Հայաստանի քաղաքները,- գրում է Հ. Մանանդյանը,– իրենց մեջ պարունակում էին ֆեոդալական կազմակերպությանը ներհակ ու

ընդդիմադիր նոր ուժեր, որոնք, ինչպես որ արևմտյան Եվրոպայում, հետզհետե ծնունդ էին տալիս տնտեսական ու սոցիալական նոր հարաբերությունների» [1]*:*

Տնտեսական բուռն վերելքի, քաղաքների աճի, արհեստների ու առևտրի աննախընթաց զարգացման, ֆեոդալների ու գյուղացիության միջև խիստ սրված հակասությունների հիմքի վրա երկրում տեղի ունեցավ մտավոր մեծ առաջընթաց, երևան եկան վերածնության սկզբնավորման նախադրյալներ: «Աշխարհիկ միտքը, համառ պայքարի մեջ մտնելով կրոնականի հետ, սկսեց իր համար զարգացման ուղիներ հարթել, դպրոցներում աշխարհիկ գիտությունները հատուկ ուսումնասիրության առարկա դարձան, փորձը հռչակվեց որպես գիտությունների ելակետային դրույթ, ֆեոդալական մարդատյացությանը հակադրվեց թոնդրակեցիների հումանիզմը, աշխարհիկ գաղափարներ ու պատկերներ մուտք գործեցին արվեստի և գրականության մեջ» [2]*:*

Հայկական վաղ վերածննդի առաջին նշաններն իրենց վառ արտահայտությունը գտան հատկապես ճարտարապետության հուժկու վերելքի մեջ. ստեղծվեցին ճարտարապետական մի շարք գլուխգործոցներ: Մեծ զարգացում ստացան գիտությունն ու արվեստը, ժողովրդական բանահյուսությունը, գեղարվեստական գրականությունը: Այդ դարաշրջանի հայ հասարակության մեջ առաջացած հումանիստական մտածողությունը, մարդու պաշտամունքն ինքնատիպ ու վառ արտահայտություն գտան հատկապես միջնադարի մեծ մտածող ու հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու ստեղծագործության մեջ:

Նարեկացու ապրած դարաշրջանն իր ամբողջության մեջ բարդ էր ու հակասական: Նրա ստեղծագործությունը հանդես եկավ որպես ընդվզում, բողոք Հայաստանում այդ ժամանակ ստեղծված վիճակի, տիրող սոցիալական իրականության դեմ, մեծ մտածողի ու հայրենասերի ներքին խոր ապրումների, հոգեկան դրամայի դրսևորում: Մտահոգիչ էր դառնում երկրի վիճակը: Անկման շրջան էր մտել Արծրունիների թագավորությունը, սպառնալի էին դարձել Բյուզանդիայի և մուսուլմանական ուժերի ոտնձգությունները, երկրում ծայր էին առել գյուղացիական շարժումները, մոլեգնում էր դրանց դեմ ուղղված ֆեոդալական ռեակցիան, խարխլվում էին ժողովրդի հոգևոր միասնության հիմքերը: Երկրի ու ժողովրդի շահերով մտահոգ բանաստեղծին անորոշ ու մռայլ պատկերներով էր ներկայանում հայրենիքի ապագան: Միաժամանակ նրան խորապես անհանգստացնում էր հասարակ ժողովրդի ծանր սոցիալական վիճակը, և նա դառնությամբ նշում էր՝ «ամեն կողմից աղքատության հնոցը մրրկում է» : Եվ այդ ամենից նա ելք էր որոնում: Այդ ելքը նա փորձեց գտնել ժողովրդի հոգևոր կյանքի զարթոնքի, մարդու կատարելագործման ու ինքնակատարելագործման, մարդկային անհատի վերածննդի գաղափարների մեջ:

Կրոնական գաղափարախոսության ու հին աշխարհայացքի մեջ սկիզբ առնող բեկման պայմաններում նոր մտքերն ու գաղափարները, բնության

---

[1] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Հայաստանի քաղաքները X–XI դարերում, Երևան, 1940, էջ 24:*

[2] *Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն, Երևան, 1966, էջ 139:*

ու մարդու պաշտամունքը, նրա զգացմունքային աշխարհի պատկերումը, բնականաբար, չէին կարող լիովին ազատ լինել ավանդական կրոնական ձևից: Սակայն դա չխանգարեց Նարեկացուն գեղարվեստական վառ գույներով վերարտադրելու անհատի զգայական աշխարհը, արժեքավորելու ու երգելու բնությունն ու մարդուն, բնական ու մարդկային գեղեցկությունն իր երկրային դրսևորումների հարստության ու բազմազանության մեջ:

Նարեկացու տաղերում, որոնք հայ գրականության մեջ միջնադարյան սխոլաստիկայի նեղ ու կաշկանդիչ մթնոլորտը մերժող լիրիկայի փայլուն նմուշներ են, ի տարբերություն կրոնական անկենդան ու վերացական պատկերների, հնչում է կենսահաստատ բնության գովքը, փառաբանվում է այն ամենը, ինչ հիշեցնում է բնությունը, աշխարհիկ կյանքը, մարդուն: Նրա լավագույն տաղերը գարնան ու բնության զարթոնքի իսկական ներբող են, իրական աշխարհի ու բնության պաշտամունքի կատարյալ հիմն: Այս առումով բնորոշ է հատկապես «Տաղ վարդավառի» քերթվածը.

Գոհար վարդն էր շղարշ առել
Արփիական վեհ վարսերից.
Ծավալվում էր հուսկ վերևում, վարսերից վեր,
Ծաղկածիծաղ ծովն երկնային[3]:

Սակայն որքան էլ վեհ ու գրավիչ են բնության՝ Նարեկացու ստեղծած պատկերները, նրա ստեղծագործության հիմնական մոտիվը մարդն է՝ իր աշխարհիկ գեղեցկությամբ ու բարեմասնություններով:

Թեև տաղերում գեղեցկության իդեալը արտաքուստ մարմնավորում է Տիրամայրը, սակայն իրականում գովերգվում է կանացի գեղեցկությունն ընդհանրապես: Գեղարվեստական մեծագույն վարպետությամբ կիրառված մակդիրներն ու մետաֆորները ծառայում են ոչ թե վերացական, անանձնական գեղեցկության, այլ իրական, աշխարհիկ գեղեցկության նկարագրությանը: Դրա առավել վառ ու տիպական դրսևորումներից է «Մեղեդի ծննդյան» տաղը:

Անթաքույց համակրանքով ու ջերմությամբ է Նարեկացին իր «Հարության» տաղում նկարագրում Մասիս լեռան աջ կողմից իջնող և դեպի Երուսաղեմ ընթացող նշանավոր սայլը վարող հասարակ մարդու՝ ճորտի մարմնական բարեմասնություններն ու գեղեցկությունը:

Սայլն այս անսովոր ճոխ է ու գեղեցիկ՝
«Սամիները արծաթից են, լուծը՝ ոսկուց,
Սամոտիներն ապրշումից.
Շարանման վրան շարված
Փոկերն են հույլ մարգարտահուռ,
Խարազանը՝ փնջված ծաղիկ…» :

[3] *Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատյան ողբերգության. Տաղեր, Երևան, 1979, էջ 571–572:*

Նրա ոսկեղեն գահույքի և բեհեզ ծիրանու վրա բազմել է «որդին արքայի» : Սակայն առավել նշանակալին այն սրբազան առաքելությունն է, որի համար սայլը գնում է դեպի Երուսաղեմ.

«Գիլ գալիս էր գլգլալեն սայլիկն ի գիլ,
Գալիս էր աջ կողմից Մասյաց,
Սայլիկն ի գիլ գալիս էր գիլ գլգլալեն
Ու մտնում էր ճոնչալով Երուսաղեմ…» :

Իսկ ո՞վ է վարում այդ նշանավոր ուխտագնացությունը, ո՞վ է վարում անսովոր սայլիկը: Այն վարում է հասարակ ռամիկը՝ ճորտը, որն այքի է ընկնում, սակայն, ֆիզիկական զարմանալի գեղեցկությամբ ու մարդկային հմայքով.

«Ճկուն էր ճորտն այն ու ճապուկ,
Դալարամեջք, հաստաբազուկ,
Լայնաթիկունք, խարտիշագեղ, ահեղագոչ.
Նա ձայնում էր եզնամոլին,
Խայտում, ցնծում ու կանչում էր աթոռակին» [4]:

Նարեկացու հումանիզմը, մարդու մասին նրա հայացքները հատկապես խոր արտահայտություն գտան «Մատյան ողբերգության» պոեմում՝ հայկական Վերածնության սկզբնավորման շրջանի գրական այդ մեծագույն հուշարձանում: Չնայած պոեմի կրոնական ձևին, նրա հեղինակը, դուրս գալով միջնադարյան միստիցիզմի շրջանակներից, պատկերել է երկրային մարդուն իր ամենամարդկային գծերով, հույզերի ու խոհերի հարուստ աշխարհով, ներքին սուր բախումներով:

Պոեմում Նարեկացին զարգացնում է հումանիստական աշխարհընկալմանը խորապես բնորոշ այն սկզբունքը, որ մարդը ծնվում է մաքուր հոգով, և գոյություն ունեցող իրականությունն է նրա էությունը լցնում բացասական հատկանիշներով ու ապականում նրա հոգին: Եթե, իրոք, մարդու հատկանիշները ոչ թե բնատուր են, այլ ձեռքբերովի, մտածում է բանաստեղծը, ուրեմն հնարավոր է և նրա վերադարձը դեպի բարոյապես մաքուր վիճակը, նրա ազատագրումը իր վրա ծանրացած մեղքերի ու արատների բեռից: Մարդու բարոյական մաքրման, նրա մեջ բացասականի վերացման ու մարդկայինի հաղթանակի պահանջն ու դրա նկատմամբ խոր հավատն էլ հենց կազմում են պոեմի ոգին: Նարեկացին փառաբանում է կատարյալ էակին՝ Աստծուն, նրան պատկերելով որպես կատարելության ձգտող մարդու իդեալ: Այստեղ Նարեկացին, ասես, կանխագործում է հետագա դարերի շատ մտածողների, այդ թվում Լյուդվիգ Ֆոյերբախի[5], ով-

[4] *Նույն տեղում, էջ 567–570:*

[5] *Ըստ Ֆոյերբախի՝ «… մարդը կրոնի մեջ մարմնավորում է իր ցանկությունները, երազանքներն ու զգացմունքները: Նա հավատում է աստվածայինին ոչ միայն այն պատճառով, որ ունի երևակայություն և զգացմունք, այլև այն պատճառով, որ ունի երջանիկ լինելու ձգտում: Նա հավատում է երանելի էակին ոչ միայն այն պատճառով, որ պատկերացում ունի երանության մասին, այլև այն պատճառով, որ ինքն է ուզում երանելի լինել: Նա հավատում է կատարյալ էակին, որովհետև ինքն է ուզում լինել կատարյալ: Նա հավատում*

քեր յուրովի են բացատրում մարդու կողմից Աստծո գաղափարի ստեղծումն ու նրա պաշտամունքը: Ըստ այդ տեսակետի, մարդը լինելով ոչ կատարյալ, սահմանափակ ու մահկանացու էակ և չկարողանալով համակերպվել այդ իրողության հետ, իր երևակայությամբ ստեղծում է Աստծուն՝ նրան վերագրելով այն բոլոր բարեմասնություններն ու հատկանիշները, որոնցից ինքը զուրկ է, բայց որոնց տիրապետելը իր գերագույն երազանքն է:

Պոեմում Նարեկացին ձգտում է այն բանին, որ մարդու մեջ հաղթահարվի այն, ինչ չի բխում մարդկային բնությունից, նրա կոչմանը խորթ է ու անհարիր, և նրա մեջ հաղթանակի այն ամենը, ինչ բնորոշում է նրա իսկական մարդկային էությունը: Պոեմի լեյտմոտիվը երկրային արատների ու իր վրա ծանրացած մեղքերի բեռից ազատվելու և ինքնամաքրման ու ինքնակատարելագործման ճանապարհով կատարյալ էակին՝ Աստծուն հասնելու և նրան միանալու ձգտումն է: Այդ ձգտումն էլ հենց կազմում է պոեմի կենսահաստատ ուժն ու լավատեսական ոգին: Դրամատիկ տեսարաններին, հոգեկան բախումներին ու տվայտանքներին, կործանման սարսափներին փոխարինելու է գալիս ոգեղեն տեսիլքը՝ հիմնված ինքնամաքրման միջոցով փրկության հասնելու և աստվածային էությանը միանալու, դրանով իսկ՝ աստվածանալու լուսավոր հավատի վրա:

Այդ նպատակի համար նա մարդուն հակադրում է Աստծուն, նրան պայքարի հանում վերջինիս դեմ: Սակայն մարդուն հակադրելով Աստծուն, իսկ մարդկայինը՝ աստվածայինին, Նարեկացին դրանով ոչ միայն չի դավաճանում մարդուն ու մարդկայինին, ոչ միայն չի հրաժարվում մարդու մեջ իսկական մարդկայինի դրվատումից, այլև մարդուն, նրա իսկական մարդկային հատկանիշները բարձրացնում է Աստծո ու աստվածայինի աստիճանի: Աստված և մարդը Նարեկացու պոեմում վերջին հաշվով ձուլվում են իրար հետ, հանդես գալիս որպես մի միասնություն, այնպիսի միասնություն, երբ մարդը, ազատվելով իր վրա ծանրացած արատների ու մեղքերի բեռից, բարոյապես մաքրվելով ու ազնվանալով, դառնում է կատարյալ էակ և դրանով իսկ կանգնում Աստծո հետ միևնույն մակարդակի վրա: Մարդու փրկությունն էլ, ըստ Նարեկացու, նրա միաձուլումն է Աստծու հետ.

«Եվ այն, ինչ ասելն իսկ ահավոր է,
Գրում եմ այստեղ ես ի հիշատակ մեծ երախտիքիդ,
Կարող ենք լինել մենք աստված նույնիսկ՝
շնորհներով ընտիր
Եվ ստեղծածիդ հետ միանալ» [6]:

Այսպիսով, Աստված Նարեկացու մոտ հանդես է գալիս իբրև կատարյալ մարդ, իսկ մարդն իր կատարելության մեջ՝ իբրև Աստված: Դա մարդու ու

է անման էակին, որովհետև ինքը չի ուզում մահանալ» (Լ. Ֆ ո յ ե ր բ ա խ. Քրիստոնեության էությունը, Երևան, 1968, էջ 61):

[6] *Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Մատյան ողբերգության, Երևան, 1960, էջ 225:*

մարդկայինի սկզբունքորեն նոր ըմբռնում էր, մարդու վեհացումը, նրա աստվածացումը՝ այդ բառի ամենաբարձր իմաստով: Մարդու՝ նման ըմբռնումը ոչ միայն ոչ մի ընդհանուր բան չուներ ժամանակի իշխող գաղափարախոսության, մարդու՝ իբրև Աստծո ծառայի, քրիստոնեական դավանանքի հետ, այլև մարդու իսկական մարդկային գոյության իրավունքի հռչակումն էր, մարդկային էակի բարոյական մաքրման, նրա ինքնավեհացման ու ինքնակատարելագործման անսահման հնարավորության հավաստումը:

Հայ ժողովրդի մարդասիրական ու ազատասիրական ձգտումները փայլուն արտահայտություն գտան «Սասնա Ծռեր» էպոսում: Հայ ժողովրդի հանճարով արարված այդ հերոսապատման մեջ իր գեղարվեստական արտացոլումն է գտել օտար զավթիչների լծից ժողովրդի ազատագրական պայքարի ընդհանուր վերելքը, աշխատավորների ինքնագիտակցության բուռն աճը, նրանց բոցավառ տենչը դեպի ազատությունը, ժողովուրդների բարեկամությունը, ազատ ստեղծարար աշխատանքի պաշտամունքը: Էպոսում ժողովուրդը մերժում է ֆեոդալական պետական ու տնտեսական կարգը, արտահայտում իր ակնհայտ բացասական վերաբերմունքը տիրող հարաբերությունների նկատմամբ, հանդես գալիս մարդու ճնշման ու նվաստացման, նրա իրավունքների ոտնահարման դեմ: Ժողովրդի հերոսները հանուն մարդու ու նրա իրավունքների պայքարի են ելնում աշխարհի չար ուժերի, բոլոր նրանց դեմ, ովքեր խանգարում են ժողովրդին՝ ապրելու ազատ ու բարեկեցիկ կյանքով: Ցանկալի հասարակության մասին իր իդեալում ժողովուրդը չի ճանաչում հասարակության այս կամ այն խմբի համար որևէ արտոնություն ու հատուկ իրավունք: Ժողովրդի իդեալը սոցիալական ու ազգային ճնշումից ազատ հասարակությունն է, որտեղ իշխում է ստեղծարար աշխատանքը, խաղաղ ու բարեկեցիկ կյանքը: Էպոսի հերոսները ոչ միայն թշնամանք չեն տածում մյուս ժողովուրդների նկատմամբ, այլև խոր համակրանքով են լցված դեպի բոլոր հասարակ մարդիկ և իրենց ցասումն ուղղում են բռնության դեմ:

Օտար բռնակալների դեմ ժողովրդի լայն զանգվածների բուռն ընդվզումի հետ մեկտեղ՝ դա աշխատավոր մարդկանց սոցիալական պայքարի գեղարվեստական արտացոլումն էր, նրանց մարդասիրական ու ազատասիրական ձգտումների արտացոլումը, արտացոլումը այն հակասության, որ գոյություն ուներ ճնշողների ու ճնշվողների միջև:

Սակայն, ինչպես հայտնի է, ազատության համար ժողովրդի պայքարը, դարաշրջանի գյուղացիական շարժումներն անհաջողության մատնվեցին: Պատմական այս ճշմարտությունն իր գեղարվեստական արտացոլումն է գտել էպոսի վերջին մասում՝ Փոքր Մհերի կերպարում: Աշխարհը նորից լի է չարիքով, հողը պղծվել է և այլևս չի դիմանում մարդկանց նվիրական իդեալները մարմնավորող հերոսի նժույգի հարվածներին, փշրվում ու նահանջում է նրա ոտքերի տակ: Ժողովրդի հերոսը, հալածված ու մերժված, հեռանում է չարիքով ու պղծությամբ լեցուն այս աշխարհից ու փակվում ժայռի մեջ:

Էպոսի նման ավարտը խորհրդանշում է ժողովրդական մտածողությանը բնորոշ լավատեսական ոգին, ժողովրդի անխախտ հավատն իր արդար գոր-

ծի վերջնական հաղթանակի նկատմամբ: Միերը չի մեռնում, այլ կենդանի փակվում է ժայռի մեջ, որպեսզի, երբ հնչի չարիքով ու նախանձով լեցուն հին աշխարհի վերջին ժամը, երբ «աշխարք ավերվի, մեկ էլ շինվի» , պատռի ժայռը, դուրս գա լույս աշխարհ, անցնի «քառասուն օրվա ճամփա» մեկ ժամում և աշխարհում հաստատի համընդհանուր բարօրություն ու երջանկություն:

Միերի կերպարը խորհրդանշում է հայ ժողովրդի լուսավոր ապագայի տենչը, հարատևելու նրա բուռն ձգտումը, այն երազանքը, որ նա փայփայել է դարեր շարունակ ու ավանդել սերունդներին: Միերի անմահությունը ժողովրդի անմահությունն է, սոցիալական հավասարության ու արդարացի հասարակարգի անխուսափելի հաղթանակի, աշխարհի չար ու անմարդկային ուժերի դեմ բարու ու մարդկայինի հաղթանակի նկատմամբ ժողովրդի անսասան հավատի վկայությունը:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ГУМАНИСТИЧЕСКОЙ МЫСЛИ

ГРИГОР АСАТРЯН

Р е з ю м е

Современный гуманизм зародился не в теоретико-идейном и социально-политическом вакууме; его источником является восходящее движение человечества по пути исторического прогресса, предыдущие достижения гуманистической мысли, истоки которых восходят к древнейшим временам истории цивилизации. В статье рассматриваются проявления идей гуманизма в армянской действительности как в ранние времена, так и в X–XI веках. Предметом анализа стали, в частности, гуманизм Нарекаци, а также отражение идей гуманизма в эпосе «Давид Сасунский».

FROM THE HISTORY OF ARMENIAN HUMANISTIC THOUGHT

GRIGOR ASATRYAN

S u m m a r y

Modern humanism did not originate from a theoretical and idealistic, social and political vacuum; its source lies in the historic process of evolution of human morals: previous accomplishments of the humanistic thought, dating to the ancient period of the history of humanity. The manifestations of the ideas of humanism in the Armenian reality in the earliest times and in the 10th–11th centuries are analyzed. The subjects of research were, in particular, Narekatsi’s humanism, as well as the ideas of humanism, reflected in the epic “David of Sassoun”.